**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

<<12>> փետրվարի 2024թ. N ՄՈ/94- -Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N ՄՈ/108-2022 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 2024 թվականի փետրվարի 7-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի փետրվարի 16-ի «Գևորգ Առաքելյանին «Արմավիրի Վ. Բախշյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին» NՄՈ/108-2022 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշմամբ հաստատված հավելվածի 3.1 կետում «358643 (երեք հարյուր հիսունութ հազար վեց հարյուր քառասուներեք)» բառերը փոխարինել «298410 (երկու հարյուր իննսունութ հազար չորս հարյուր տասը)» բառերով:

2) Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**